ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2-1
Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման

ք. Երևան <<12>> հոկտեմբեր 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինպլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Նազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018թ օգոստոսի 9-ի թիվ 925-Ն որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018թ. սեպտեմբերի 10-ին կնքված ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 129999600 (հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011020733 ՀՎՀՀ 02565518	<<Շինպլյուս>> ՍՊԸ ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18 Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Հ/Հ 220553330550000 ՀՎՀՀ 00891777
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
2018թ. կնքված
<<   >>
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Ծ-2-1 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
[redacted]														
1	Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման	-	-	-	-	-	-	-	-	-	-	96199000	96199000	96199000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

...պորտի, կապի և տեղեկատվական
...ոլոգիաների նախարարություն
...ևան, Վազգեն Սարգսյան 3/3
...րոնական Գ. ...
ՀՀ 9000 020733
ՀՎՀՀ 0 65518

ԿԱՏԱՐՈՂ

<<Շինպլյուս>> ՍՊԸ
Երևան, ... //18
Ակբ-Կրեդիտ Ագրիկոլ ... ՓԲԸ
Հ/Հ 22055333055...
ՀՎՀՀ 00899...

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2

ք. Երևան «10» սեպտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինպլյուս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Նազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 129999600 (մեկ հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 21666600 (քսանմեկ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

---

[1] *տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՎՀՀ՝ 02565518	«Շինպլյուս» ՍՊԸ ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18 ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Հ/Հ՝ 220553330550000 ՀՎՀՀ՝ 00891777
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 10 » սեպտեմբերի 2018թ. կնքված
ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՁԱՓԱԲԱԺԻՆ 2
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
(2018 թվական)

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	*2*		*4*	*5*	*6*
	I Երթևեկելի մաս				
1	Ա/բ ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և վերադարձ սեփականատիրոջը:	մ²	464.5	0.901	418.51
2	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	149	5.316	792.08
3	Փոսային նորոգում հիմքով. - խիճ h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	601	4.289	257769
4	Ճաքալցում	մ	4120	0.405	1668.60
5	Հարթեցնող շերտ ա/բետոնե խառնուրդով հմիջ =3սմ	տ	396.39	46.523	18441.25
6	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	18741.95	5.533	103699.21
	II. Կողնակներ և կողային առուներ				
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով (6вIII)	մ²	3590	0.021	75.39
2	Կողնակների լրացում ավազակոպճային բնահողով հմիջ.=5 սմ (6вIII - 5կմ)	մ³	179.5	2.500	448.75
3	Կողային առուների մաքրում	գծմ	250	0.610	152.50
	III. Իջատեղեր				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակ. այտ 5.0կմ	մ³	0	1.690	0.00
2	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա , տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	0	26.540	0.00
3	Խճային հիմք h=12սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	0	3.172	0.00
4	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²		4.450	0.00
	IV. Հավաքովի ե/բ վաքեր 30x34սմ				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	89	2.662	236.92
2	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.5մ3 շ.տ. ա/ի վրա , տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	22.25	8.380	186.46
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	18.33	5.773	105.82

4	Հավաքովի ե/բ վաքերի 30x34 սմ տեղադրում	մ³	22.56	259.260	5848.91
5	Վաքերի ջրամեկուսացում	մ²	355.32	1.300	461.92
6	Մետ. խողովակի տեղադրում d=273մմ, 1գծ.մ =33,05կգ	մ	3.	25.716	77.15
7	Մետ. խողովակի ջրամեկուսացում d=273մմ,	մ	2.0	1.650	3.30
8	Վաքի և խողովակի միացման միաձույլ բետոն B20, F100	մ³	0.096	118.800	11.40
9	Միաձույլ բետոնե եզրաշար 15x25սմ B20, F100	մ³	7.5	72.600	544.50
	V. Դիտահորեր				
1	Գոյ. ունեցող դիտահորերի մաքրում	մ³	0.7	8.250	5.78
2.	Դիտահորի կափարիչ	հատ	2	99.745	199.49
	VI. Արգելափակոցներ				
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում (δ=4մմ, քայլ-4մ, մետ. սյուն)	գծմ	0	24.318	0.00
2	Ուղղորդ սյուների ապամոնտաժում տեղափոխում լցակույտ 5կմ	հատ	0	4.740	0.00
3	Ուղղորդ սյուների տեղադրում	հատ	0	16.360	0.00
	VII. Նշագծում			0.000	
1	Նշագծման ընդհանուր մակերեսը	մ²	0	1.434	0.00
	VIII. Նշաններ			0.000	
1	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	0	5.248	0.00
2	Նոր ճան. նշանների տեղադրում,	հատ	0	32.900	0.00
	IX. Հավաքովի ե/բ d=1.0մ և d=1.5մ խողովակների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5կմ հեռ. վրա	մ³	2	8.270	16.54
2	Հող. աշխ-ներ (10eIV կարգի բնահող) գլխամասի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով, կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	12	6.060	72.72
3	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ հիմքերի և վաքերի տակ	մ³	18	5.772	103.90
4	Ելքի գլխամասի հիմքի և իրանի կառուցում միաձույլ բետոնից B20, F100	մ³	31	118.870	3684.97
5	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ³	12	2.074	24.89
6	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով - բետոն	մ²	58.2	1.300	75.66
7	Մուտքում գլխամասերի սվաղ (ցեմենտաավազային շաղախով 5սմ հաստությամբ)	մ²	10.4	3.740	38.90
8	Վաքի կառուցում մուտքում, ելքում միաձույլ բետոնից B20, F100	մ³	3.2	114.490	366.37
	X. Սլավինսկի տիպի կամուրջի նորոգում կմ 0+454-ում				

1	Հունի մաքրում մուտքում, ելքում և երթևեկելի մասում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5կմ հեռ. վրա	u^3	2.7	8.270	22.33
2	Եզրապատի կառուցում մուտքում և ելքում միաձույլ բետոնից B20, F100 2x(2x0,4x0,6մ)	*գ.մ.*	4	28.200	112.80
	XI. Կամուրջի նորոգում կմ 0+096-ում (սխեման 1x14(10)մ, երկարությունը 15մ, բարձրությունը 3.1մ, գաբարիտը Г-15.1)				
1	Բարձրացված տիպի Т-1 հավաքովի մայթի բլոկների վրա գտնվող 6aII գրունտի կազմատում և բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ հեռավորության վրա:	$մ^3$	3.0	3.350	10.05
2	Թուջե մետաղական բազրիքների ափամոնտաժում հետագա մոնտաժումով (օգտագործելով հունի մեջ գտնվող 5 մ սեկցիաները), բազրիքների բացակա N8 շվելերից բռնաձողի տեղադրումով L=6 մ,՝ ներկում - 24 $մ^2$:	տ	3	127.500	382.50
3	Մայթերի բլոկների եզրերի վերանորոգում (բաց ամրանների փակում) M200 մակնիշի ցեմ. շաղախով h=3 սմ 15x0.28	$մ^2$	4.2	3.050	12.81
4	Մայթերի վրա ավազային ասֆալտի տեղադրում h=4 սմ:	$մ^2$	30	4.747	142.41
5	Ելքում աջ ռիգելի կոնսոլային տեղամասի մասնակի կազմատում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ հեռավորության վրա: :	$մ^3$	0.1	41.400	4.14
6	Նույնը՝ տեղամասի վերականգնում B25 դասի միաձույլ բետոնով օգտագործելով գոյ. Ունեցող ամրանները, ինչպես նաև տեղադրելով լրացուցիչ ամրաններ: &14 - L=7.5 մ, P=9.06 կգ:	$մ^3$	0.224	115.270	25.82
7	Ելքում ռիգելների վերանորոգում M200 մակնիշի ցեմ. շաղախի b=5 սմ:	$մ^2$	6.5	4.012	26.08
8	Ելքում ձախ կողմի հողային պաստառի վերականգնում՝ գրունտի տեղափոխումը 5 կմ հեռավորության վրա գտնվող պահուստից բարձումը ա/ի էքս. 1.25 $մ^3$ շտ. խտացում պնևմատոփանով, շերտ-շերտ ջրի լցաբախշումով - 10eIV:	$մ^3$	2.7	3.318	8.96
				Ընդամենը՝	141087.45

**միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*

Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
(ԸՆԴՀԱՆՈՒՐԸ)

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեքը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	I Երթևեկելի մաս				
1	Ա/բ ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և վերադարձ սեփականատիրոջը:	մ²	464.5	0.901	418.51
2	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	163	5.316	866.51
3	Փոսային նորոգում հիմքով. - խիճ h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	658	4.289	2822.16
4	Ճաքալցում	մ	4870	0.405	1972.35
5	Հարթեցնող շերտ ա/բետոնե խառնուրդով հմիջ =3սմ	տ	446.063	46.523	20752.19
6	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	21090.45	5.533	116693.46
	II. Կողնակներ և կողային առուներ				
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով (6вIII)	մ²	5345	0.021	112.25
2	Կողնակների լրացում ավազակոպճային բնահողով հմիջ.=5 սմ (6вIII - 5կմ)	մ³	267.25	2.5	668.13
3	Կողային առուների մաքրում	գծմ	250	0.61	152.50
	III. Իջատեղեր				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	179	1.69	302.51
2	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա , տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	9.59	26.54	254.52
3	Խճային հիմք h=12սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	1681.63	3.172	5334.13
4	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	1681.63	4.45	7483.25
	IV. Հավաքովի ե/բ վաքեր 30x34սմ				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.5մ³ շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	89	2.662	236.92
2	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.5մ3 շ.տ. ա/ի վրա , տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	22.25	8.38	186.46
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	18.33	5.773	105.82
4	Հավաքովի ե/բ վաքերի 30x34 սմ տեղադրում	մ³	22.56	259.26	5848.91
5	Վաքերի ջրամեկուսացում	մ²	355.32	1.3	461.92
6	Մետ. խողովակի տեղադրում d=273մմ, 1գծ.մ =33,05կգ	մ	3.0	25.716	77.15
7	Մետ. խողովակի ջրամեկուսացում d=273մմ,	մ	2.0	1.65	3.30
8	Վաքի և խողովակի միացման միաձույլ բետոն B20, F100	մ³	0.096	118.8	11.40
9	Միաձույլ բետոնե եզրաշար 15x25սմ B20, F100	մ³	7.5	72.6	544.50

	V. Դիտահորեր				
1	Գոյ. ունեցող դիտահորերի մաքրում	մ³	0.7	8.25	5.78
2.	Դիտահորի կափարիչ	հատ	2	99.745	199.49
	VI. Արգելափակոցներ				
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում (δ=4մմ, քայլ-4մ, մետ. սյուն)	գծմ	708	24.318	17217.14
2	Ուղղորդ սյուների ապամոնտաժում տեղափոխում լցակույտ 5կմ	հատ	6	4.74	28.44
3	Ուղղորդ սյուների տեղադրում	հատ	26	16.36	425.36
	VII. Նշագծում				
1	Նշագծման ընդհանուր մակերեսը	մ²	138.475	1.434	198.57
	VIII. Նշաններ				
1	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	7	5.248	36.74
2	Նոր ճան. նշանների տեղադրում, այդ թվում՝	հատ	34	32.9	1118.60
	IX. Հավաքույի ե/բ d=1.0մ և d=1.5մ խողովակների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5կմ հեռ. վրա	մ³	2	8.27	16.54
2	Հող. աշխ-ներ (10eIV կարգի բնահող) գլխամասի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով, կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	12	6.06	72.72
3	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ հիմքերի և վաքերի տակ	մ³	18	5.772	103.90
4	Ելքի գլխամասի հիմքի և իրանի կառուցում միաձույլ բետոնից B20, F100	մ³	31	118.87	3684.97
5	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ³	12	2.074	24.89
6	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով - բետոն	մ²	58.2	1.3	75.66
7	Մուտքում գլխամասերի սվաղ (ցեմենտաավազային շաղախով 5սմ հաստությամբ)	մ²	10.4	3.74	38.90
8	Վաքի կառուցում մուտքում, ելքում միաձույլ բետոնից B20, F100	մ³	3.2	114.49	366.37
	X. Սլավինսկի տիպի կամուրջի նորոգում կմ 0+454-ում				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում և երթևեկելի մասում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5կմ հեռ. վրա	մ³	2.7	8.27	22.33
2	Եզրապատի կառուցում մուտքում և ելքում միաձույլ բետոնից B20, F100 2x(2x0,4x0,6մ)	գ.մ.	4	28.2	112.80
	XI. Կամուրջի նորոգում կմ 0+096-ում (սխեման 1x14(10)մ, երկարությունը 15մ, բարձրությունը 3.1մ, գաբարիտը Г-15.1)				

1	Բարձրացված տիպի Т-1 հավաքովի մայթի բլոկների վրա գտնվող 6aII գրունտի կազմատում և բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ հեռավորության վրա:	մ³	3.0	3.35	10.05
2	Թուջե մետաղական բազրիքների ափամոնտաժում հետագա մոնտաժումով (օգտագործելով հունի մեջ գտնվող 5 մ սեկցիաները), բազրիքների բացակա N8 շվելերից բռնաձողի տեղադրումով L=6 մ,՝ ներկում - 24 մ²:	տ	3	127.5	382.50
3	Մայթերի բլոկների եզրերի վերանորոգում (բաց ամրանների փակում) M200 մակնիշի ցեմ. շաղախով h=3 սմ 15x0.28	մ²	4.2	3.05	12.81
4	Մայթերի վրա ավազային ասֆալտի տեղադրում h=4 սմ:	մ²	30	4.747	142.41
5	Ելքում աջ ռիգելի կոնսոլային տեղամասի մասնակի կազմատում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ հեռավորության վրա: :	մ³	0.1	41.4	4.14
6	Նույնը՝ տեղամասի վերականգնում B25 դասի միաձույլ բետոնով օգտագործելով գոյ. Ունեցող ամրանները, ինչպես նաև տեղադրելով լրացուցիչ ամրաններ: &14 - L=7.5 մ, P=9.06 կգ:	մ³	0.224	115.27	25.82
7	Ելքում ռիգելների վերանորոգում M200 մակնիշի ցեմ. շաղախի b=5 սմ:	մ²	6.5	4.012	26.08
8	Ելքում ձախ կողմի հողային պաստառի վերականգնում՝ գրունտի տեղափոխումը 5 կմ հեռավորության վրա գտնվող պահուստից բարձումը ա/ի էքս. 1.25 մ³ շտ. խտացում պնևմատոփանով, շերտ-շերտ ջրի լցաբախշումով - 10eIV:	մ³	2.7	3.318	8.96
				Ընդամենը՝	189670.78
*միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՎՀՀ՝ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինպլյուս» ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220553330550000
ՀՎՀՀ՝ 00891777

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 10» սեպտեմբերի 2018թ. կնքված
ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՁԱՓԱՓԱԺԻՆ 2
Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
(2018 թվական)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
2	Կողնակներ և կողային առուներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
3	Իջատեղեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
4	Հավաքովի ե/բ վաքեր 30 x34սմ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
5	Դիտահորեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
6	Արգելափակոցներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
7	Նշագծում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
8	Նշաններ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող

		համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
9	Հավաքովի ե/բ d=1.0մ և d=1.5մ խողովակների նորոգում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
10	Սլավինսկի տիպի կամուրջի նորոգում կմ 0+454-ում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
11	Կամուրջի նորոգում կմ 0+096-ում (սխեման 1x14(10)մ, երկարությունը 15մ, բարձրությունը 3.1մ, գաբարիտը Գ-15.1)	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո**

Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
1	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
2	Կողնակներ և կողային առուներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
3	Իջատեղեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
4	Հավաքովի ե/բ վաքեր 30 x34սմ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո

5	Դիտահորեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
6	Արգելափակոցներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
7	Նշագծում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո
8	Նշաններ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 հետո
9	Հավաքովի ե/բ d=1.0մ և d=1.5մ խողովակների նորոգում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո
10	Սլավինսկի տիպի կամուրջի նորոգում կմ 0+454-ում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո
11	Կամուրջի նորոգում կմ 0+096-ում (սխեման 1x14(10)մ, երկարությունը 15մ, բարձրությունը 3.1մ, գաբարիտը Գ-15.1)	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք.Երևան, Վազգեն Մարգարյան 3/3,
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինպլյուս» ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՀ 220553330550000
ՀՎՀՀ 00891777

(ստորագրություն)

Հավելված թիվ 4
« » 2018թ. կնքված
ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2018թ. կնքված
ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Շ-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն